ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2025թ. **N --- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱԾ «ԿՆՈՋ ՖԻԳՈՒՐ» ՔԱՆԴԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» հ. 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով,

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Երևանի Հ. Թումանյանի անվան այգում քանդակագործ Հակոբ Հակոբյանի հեղինակած «Որս» քանդակի հարևանությամբ «Կնոջ ֆիգուր» քանդակի տեղադրման և քանդակախումբ ստեղծելու առաջարկությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2025 թվականի հոկտեմբերի ----ի
N --- Ա որոշման

ք. Երևան Աջափնյակ վարչական շրջան Հ.Թումանյանի անվան այգի

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱԾ «ԿՆՈՋ ՖԻԳՈՒՐ» ՔԱՆԴԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023թ. Հ.Թումանյանի անվան այգում տեղադրվել է Հակոբ Հակոբյանի հեղինակած «Որս» քանդակը, որի հարևանությամբ 2025թ. նախատեսվում է տեղադրել քանդակագործի «Կնոջ ֆիգուր» քանդակը:

Հակոբ Հակոբյանը իր կյանքի վերջին տարիներին հրապուրվել է մանրաքանդակների ստեղծմամբ, որոնք պարզ աշխատանքային գործիքներից՝ աքցաններից ու հարթաշուրթերից պատրաստված քանդակներ են, որոնք ըստ արվեստագետի բնորոշման ունեն բնավորություն, յուրահատուկ կեցվածք և հիշեցնում են մարդկային տարբեր հոգեվիճակներ և ապրումներ:

«Հակոբ Հակոբյանի հեղինակած «Կնոջ ֆիգուր» քանդակի տեղադրման համար Երևան համայնքի բյուջեում փոփոխություններ չեն նախատեսվում, ֆինանսական ծախսերը հոգալու է ՀՀ նախագահի աշխատակազմը:

Հակոբ Հակոբյանը ծնվել է 1923 թ. մայիսի 16-ին Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում: 1962թ. ընտանիքով հայրենադարձվել է Հայաստան, 1963թ. անդամակցել է Հայաստանի նկարիչների միությանը, 1970թ. արժանացել է Հայաստանի վաստակավոր նկարչի կոչման, 1977թ.՝ ժողովրդական նկարիչ, 1997թ. արժանացել է «Մեսրոպ Մաշտոց շքանշանի»:

Կարևորելով տաղանդավոր արվեստագետի արժանվույն գնահատման, ստեղծագործական ժառանգության արժևորման և հանրահռչակման անհրաժեշտությունը՝ առաջարկվում է ընդունել սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ